

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 12

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

24 ՄԱՐՏ 1901

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրբ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրբ., կանխիկ վճարելի : Արտասահման 12 Գրանք կամ 5 բուլղի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մեկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչէ-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ, որ արուարձաններու լրագրավաճառներուն բով :

Ձեռնէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍՅԻ

ՀԱՍՏԻ

در علیہ غلطہ «مسیس» غزنہ می ادارہ می

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորաստանկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



ՍԱԳԱՅԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Ղալաթիա, Գուրգուլու խան Թիւ 7

Ծաղիկ լրագրի սոյն Տպարանին մէջ խնա-
մով կը կատարուին տպագրական ամէն տե-
սակ յանձնարարութիւններ, — ծանուցումնե-
րու, հարսանեկան հրաւիրագիրներու, այ-
ցետումներու, մահազոյներու, առեւտրական
չրջարեւականներու, եւայլն, — պատրաստու-
թիւնը, — դիւրամատչելի պայմաններով:

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Յ Ժ

ՏՈՔԹ, Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալարա-Սեբալի Լիսէին դէմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240.000.000 Քր.
1899ին գանձուած ապահովագիրն	19.500.000 »
Գրամազուլիս եւ պահեստ	105.000.000 »
Ապահովագրեալ գրամազուլիս	18.000.000.000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99 000.000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000.000 »
Գրամազուլիս եւ պահեստք	150.000.000 »

որ. ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԸ ԱՐԵԻՆԸՔԻ ՍԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպատաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան
պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ լուսախաբուրիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարգման (accumulation des
bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին:

Ընկերութեան գրամատուցն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահսապուրուն խան, Օսմ. Պաշայիւն դիւանք

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— 24 ՄԱՐՏ 1901 —

ԹԻԻ 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծաղկազարդի լիշատակ մը՝ գրական կեանքէ. Տ. Ա. — Բանաստեղծութիւններ. Տիտր երաժշտութիւն. Վ. ՄԱ-
ԼԵՋԵԱՆ. — Քերթողք. ԱՐՏ ՅԱՐԿԻԹԻՒՆԵԱՆ. — Աղջկանց համակատար. ԱՐՄԻՆԷ. — Բանասիրական.
Աղաւաղեայ բառեր. ՅՈՒՂ ԳԱՋԱՆՃԵԱՆ. — Ծաղկազարդ երուսաղէմի մէջ. Մ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Աղանի-
ները (Պարզ պատմութիւն մը). Թարգմ. գերմանէ կեն ՕՐ. ՖԼՈՌԱ. — Յուշատար :

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՅԻՇԱՏԱԿ ՄԸ

ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Երբ մէկը շունի «Գիտակ»ին ձեռնհասու-
թիւնը ու հմուտութիւնը՝ կրօնային նիւթերու
վրայ գրելու համար հեշտօրէն, կամ վաղու
մեռ «Կուճիկի Արեւելոյ»ին զգայուն գրիչը,
որ աւագ տօներուն կը զիւթէր բնթերցող
ները իր սրտի խօսող յօգուածներովը, լա-
ւագոյն կ'ընէ բնաւ չխորձել տօնական օրուան
մը հոգեւրանութիւնը բնեւեռ թողուլ սրտաւա-
ղող եկեղեցի երթայ մտիկ ընելու իր նախա-
փրած քարոզիչները : Բայց չես գիտեր ի՞նչ
պայմանադրական բան մը կը ծանրանայ, մա-
նաւանդ արհեստով հրապարակագիր եղողին
վրայ՝ գոնէ Ծաղկազարդին ու Զատիկին մէջ-
մէկ էջ նուիրելու այդ տօներուն . եւ վաղը
Ծաղկազարդ է : Աշխատակից մը, Մասիսի
այս թիւին մէջ, կը քրքրէ եկեղեցական հո-
յակաւ թափօրի մը յիշատակը երուստղեմէն,
Ծաղկազարդի առտուն կատարուած, ու կը
մտածեմ թէ անրարեպաշտ բան մը ըրած չպիտի
ըլլամ եթէ ես ալ, իմ մասին, քրքրեմ . . .
աշխարհական յիշատակ մը, — այն ալ տօն
մը գրեթէ, գրական տօն մը սակայն, —
Ծաղկազարդէն, մօտաւոր անցեալի մը որ
այնքան հեռու կ'երեւայ արդէն՝ զայն սար-
քողներուն :

1898/ի այս օրս էր որ Մասիսը, այն ա-
տեն օրաթերթ եւ գրագէտներու ընտրելա-
գոյն խումբի մը ձեռքը, բացառիկ թիւ մը
հրատարակեց Ազգ. Հիւանդանոցին ի նպաստ,
եւ այդ միակ թիւը, Արեւելի ծաւալով, իր
տաանի չափ արձակ յօդուածներովը ու եր-
կուեքերք տաանաւորներովը արտագրեց կէսը
այն գումարին (300 ռուբլի մօտաւորապէս) զոր
քրտնաջան աշխատութիւններով ու երկարա-
տեւ պատրաստութիւններով սարքուած ֆոն-
սիւն մը կ'արտագրէր այդ թուականին : Նուա-
զահանդէսներու գեղարուեստական արժա-
նիքը ու նիւթական արդիւնաւորութիւնը տկա-
րացնել չէ այս բաղդատութեանո նպատակը,
այլ բարձրացնել գրական հանդէսի մը արժա-
նիքը. — եւ չէ՞ մի որ այդ բացառիկ թիւը
թուղթի մօտաւ մը, գրական խնջոյք մը եղաւ,
որուն սեղանին գլուխը բազմեցուցեր էին՝ օր-
ուան գրագէտներն ու հրապարակագիրները՝
իւրեց երեցագոյն պաշտօնակիցը, Կարապետ
Իսթրաճեանը, եւ որուն հեռաւոր մէկ ծայրը,
— չորրորդ երեսին վերջերը, — գացեր պզտիկ
անկիւն մը գրաւեր էր համեստօրէն Գ. Զօհ-
րապ, ա՛ն որուն կը պարտէինք այդ նորու-
թեան գաղափարը :

Դեռ Գահիրէ կը գտնուէի այն Մեծ-Պահ-
քին . Մարտ ամսուն մէջ էինք եւ խառնախմբ
— անապատին խորշակը — կը սկսէր արդէն
փշեղ զրօտաշրջիկներուն ու տեղացի հարուստ-
ներուն փութացնել տալով իրենց մեկնումի
պատրաստութիւնները , հետզհետէ ամայացը-
նելով ոգեւորութեամբ լեցուն օթէններն ու
ապարանքները , — երեւոյթ մը որ եզրիւ-
տական ուստանին մէջ ակամայ տրտմութեամբ
մը կը համակէ անոնք որ ո՛չ իսկ Աղեքսան-
դրիա իջնելու գիւրութիւնը ունին՝ գէթ ժայ-
ռուտ ու անհրապոյր ծովագերքի մը զովու-
թիւնը վայելելու : Իրիկուն մը , չարթուն
միակ իրիկունը որ ըզձալի էր գաղթականնե-
րու համար , վասն զի Պոլսոյ թղթաբերը կը
հասնէր , երկուող մը ստացայ Մասիսի խմրա-
գրութենէն , տպարանական թուղթի վրայ
հապճեպով գրուած նամակ մը որ կ'ըսէր հե-
ռագրական ոճով . — «Հիւանդանոցի օգտին
բացառիկ թիւ մը պիտի հանենք Ծաղիկազար-
դին . բան մըն ալ դուն գրէ՛ , բայց առաջին
մեկնող թղթատարին հասցնելու պայմանաւ» :
Թղթատարը կը մեկնէր յաջորդ օրն իսկ . միւս
չարթուն այլեւս ուշ պիտի ըլլար թէեւ առժա-
մայէս հեռացած խմրագրական կեանքէն ,
բայց գաղափար ունէի թէ յատուղած ձեռագիր
մը ինչքան գծուարութիւն կը պատճառէ էն
վարժ ձեռքերուն իսկ : Զափ չէին որոշած ,
վասն զի , մի՛ կարծէք որ դերձակներն ու
հիւսնները միայն չափ կը գործածեն , այս մեր
պզտիկ արուեստին մէջ ալ չափը , կամ բուն
բառով՝ cuisine-ը տարրական գիտելիքներ են ,
— ո՛չ ալ նիւթ : Կր գուշակէի միայն թէ զուարթ
գրուածք մը ունենալու համար չէր որ Պոլսոյ
բարեկամներս յիշեր էին իրենց հին մէկ աշ-
խատակիցը . ու ժամ մը վերջը , մենասրիկ
խուցիս մէջ , սեղանիս վրայ առձեռն գրու-
նուած թուղթի պաշարը կը սպասէի տենդա-
գին արագութեամբ , անզգալարար լեցնելով
բոլոր էջերը յօդուածով մը որ հիւանդանոց
կը բուրէր , — ինչպէս անդրադարձայ ետքէն ,
— հիւանդանոցէն նոր գերեզման փոխադրե-
ուած երիտասարդի մը մահուան ցնցող տպա-
ւորութեան տակ :

Ու վերջին բառը գրելէս ետքը , ժամե-
րով մնացի պատուհանիս մօտ , ականջ դնե-

լով քաղքին կեդրոնէն , զրօտալից պոզոտա-
ներէն հասնող վիզուկներուն , կառքերու թա-
ւալումին , թափառաշրջիկ երգիչներու ձայ-
նին , նարնջավաճառ աղջիկներու աղաղակին ,
գիշերային մուրացիկներու ողբին եւ անկիւնի
սրճարանէն հասնող ծերուկ նուագաժուրն
միօրինակ ու լալագին եղանակներուն , որոնք
տարօրինակ , զգլխիչ քօ-քուռի մը կազմած՝
կը բարձրանային օդին մէջ : Ներդաշնակու-
թիւն մը կար այդ աններդաշնակութեան մէջ ,
ու խորխորհուրդ բան մը . արձագանգներն
էին ատունք ցօփ կեանքի մը , գիշերային շուայ-
տութիւններու , որոնք վերջ ի վերջոյ հիւան-
դանոցի մը ցուրտ պատերուն մէջ կը մարին ,
ու միեւնոյն ատեն արձագանգներ՝ օրն ի բուն
անօթի անցընող մարդոց որոնք մութէն կ'օգ-
տուին պատառ մը հաց ճարելու համար ի-
րենց կոտրած օրինգովը կամ ձեռք կարկա-
ռելով , ու անոնք ալ , ճակատագրային հա-
կադրութեամբ մը , անսուաղութենէ կամ
թշուառութենէ կ'երթան կ'լինան հիւանդանոց :
Ու այդ տալանորութեան տակ՝ կ'արդարացնէի
ինքզինքս , մտածելով որ եթէ չէի կրցած
զուարթ նիւթ մը ընտրել , գէթ իրական
կեանքէ , ամենօրեայ կեանքէ նիւթ մը ընտ-
րած էի , թէեւ հազիւ ուրուագծելու ժամա-
նակ ունեցած : Իմ նկարագրած երիտասարդս
պարկեշտութեան տիպար մըն էր , բարի , ա-
նող , առաքինի տղայ մը , զոր անողք ակոտ
մը հիւծեր էր քիչ ատենուան մէջ եւ որուն
չա՛տ կը գտնէին հիւանդանոցի անկողին մը ,
վախնալով որ իր գրկիցներն ալ չգարակ-
ուին , — զրկիցներ՝ որոնք խառնակ կեանքէ
մը ախտաւոր իրմէ աւելի կը մեծարուէին ու
կը խնամուէին , որովհետեւ լաւ վճարողներ
էին . անոր համար էր որ մեր հիւանդը՝ Գա-
հիրէի շքեղ ու հանգստաւէտ մէկ հաստա-
տութեանը մէջ՝ ի՞նչ հիւանդանոցը կը փնտռէր ,
եկտի-Գոլիթը :

Յաջորդ աստուէն , սրտի ու մտքի պար-
տականութիւն մը կատարողի մը թեթեւու-
թիւնը զգալով ներսիդիս , յօդուածս կը յանձ-
նէի նամակատուն , առանց որոշապէս գիտ-
նալու թէ ի՛նչ պիտի ըլլար անոր ճակատա-
գիրը , ժամանակին պիտի հասնէ՞ր տուարան ,
պիտի ընդունուէ՞ր : Ու բաւական ատեն ալ

բան մը չիմացայ : Զիթենի վախառնութեամբ աստ մըն էր անիկա, զոր հետունքն կը գրկէի՝ խառնելու համար : Ծաղկազարդի առթիւ իմ գրչի ընկերներու կազմած ձիթենի պարարտ խորձին :

Ամիսներ ետքը միայն, Պոլսոյ մէջ, տեսայ Մասիսի այդ բացատիկ թիւը, — իր գրական ճոխ պարունակութեամբը համակիր ընդունելութեամբ մը սպասած ու մեծապէս ալարդիւնաւորուած, — որ արդէն հնութիւն մը դարձեր էր հանրութեան համար : Այս չէ՞ լրագրութեան ճակատագիրը : Խմբագրատան մէկ դարակին մէջ օրինակ մը պահեր էին որ նորութեան հրապարակումներ ինծի համար, ու լսեցի, մէկիկ մէկիկ, պատմութիւնը անոր կազմաւորման, ամէն մէկ յօդուածին գրութեան պատմութիւնը, նկարագրութիւնը կրուած յօդութիւններուն ու տպարանին մէջ անքուն անցուած գիշերներուն, որոնք պարտաւանդեալ մէջ լուսացած գիշերներէն աւելի անոյշ կը թուին երբեմն : գրելու, փորձ սրբագրելու, տպագրելու հիւանդութենէն — տեսակ մը *nostalgie* — բռնաւոր զրոգեալին համար : Վերջին վայրկեանին, տպարանի սեղանին վրայ, աղօտ կանթիկ մը լայսով, կապար գրիչով գրուած կամ ամբողջացած յօդուածներ կային անոնց մէջ, զրական գոհարներ որոնք շարաթիւներով մտած-

ուած ու կերտուած յօդուածներէ աւելի կ'արժէին :

1898ի այս գիշերը, տպարանին մէջ անցուցեր էին, կարծեմ, մեր բարեկամները :

Ծաղկազարդի առաւուն, վաղն առտու, կայառա, աշխոյժ, զուարթ զգացեր էին սակայն անոնք ինքզինքնին, վասն զի թերթը տպագրուած՝ հրապարակ կ'ելլէր հաղարուոր օրինակներով ու ձեռքէ ձեռք կը խլուէր :

Գրական տոն մը կուգար կը խառնուէր կրօնային տոնին, եւ եկեղեցիէն դարձող հայ ընտանիքները, ամէն զլիաւոր թողերու մէջ, — ինչպէս պատմեցին — «Ծարգարդար»ի դաշար ու օրհնուած ոստերուն հետ՝ ձեռքերին բռնած էին մէյմէկ օրինակ այդ գրական բացատիկ թիւէն, որ ինքն ալ, իր կարգին, օրհնուած էր . . . Հիւանդանոցի պատուարեւներուն սրտէն, իր արդիւնաւորման առթիւ՝ սիրտին վրէժով :

Նիւթականին հետ՝ բարոյական նշանակութիւն մըն ալ ունէր այդ յաջողութիւնը որ ցոյց տուաւ թէ, ճշմարիտ Գրականութիւնը ու ճշմարիտ Բարեգործութիւնը երբ ձեռք ձեռքի տան ներդաշնակօրէն, հանրութենէն կը գտնեն ընդունելութիւն մը որ Մեկեաններ կամ Բարեարներ փնտռելու պէտք չի թողուր չառ :

Տ. Ա.

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՄՐՄՐԵԱՆ

Նղբայր,

Այսօր ստացայ եւ կարդացի Աշեղուհի : Վսեմ է այն : Այդ մակդիրն առաջին անգամ գրչիս ներքեւ կուգայ հայերէն նոր գրքի մը համար : Բնականին հետ բնագանգական միեւնոյն նիւթերուն վրայ հառող Հեղափոխութեան Սոցիալիստական Կուսակցութեան համար : Երկարեայ մասեան՝ աղամանդային արձայայտութիւն զգեցած : Եւ աղամանդեայ մտերմ հարուած մ'եղաւ այդ ընթերցումն, որ գերազանց կերպով հաստատեց զիս իմ դաւանանքին մէջ՝ կրօնից մեծութեան ու գրաբարի գեղեցկութեան նկատմամբ : Ալիւրիա :

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

18 Մարտ 1901, Ազգ. Հիւանդանոց

Ք Ե Ր Թ Ո Ղ Ը

Խոր գիշեր է. սեղանին մէջ տխրունակ՝

Գերբողն է մինակ :

Զմեռ է. եւ ցրտին խուցը գեղացեակ՝

Լոկ սրտովն է տաք :

Ու կը հիսէ, երազ ու սեր, — իր հոգին,

Խոնքեր բանկազին.

— Լուռ, սպառնում ուրիշներու հաճոյքին,

— Հեզմանք տրոմագին :

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Լ Ե Զ Ո Ւ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն



ԱՂԱՒԱՂԵԱԼ ԲԱՌԵՐ

Ա.

Ասեն մը երբ ծայրայեղորէն հիացիկ պաշտումով մը զրարարն աստուածացուցեր էինք, ամէն մարդ այնպէս սորված էր խորհիլ թէ միակ գանձարանն է ան ուր կարելի է գրանել մեր լեզուին բառերն իրենց անեղծ հարազատութեանը մէջ: Ասկէ անհրաժեշտօրէն կը հետեւէր թէ արդի հայերէնի պարունակած այն բոլոր բառերն ու ձեւերը որոնք չեն համաձայնիր գրարարին, աղաւաղեալ ու աղճատ են, մինչ գրարարիները ճիշտն են ու հարազատը: Այս համոզումը որ խորապէս քանդակուած կը մնար մեր հին գրագէտներու մեծ մասին մտքերուն վրայ, ամբառ արհամարհանք մը, զգուսնքի պէս բան մը արթնցուցած էր անոնց մէջ՝ հանդէպ արդի ռամբօրէն հայերէնին եւ անոր գաւառարարաններուն:

Եւ սակայն լեզուարանական զննութիւնները անմիտեկի կերպով ցոյց տուած են թէ գրարարը մեր երեւակայեւ սիրած նախաձեռնէնը չէ, որուն բառերը կարենայինք համարել լեզուին էն նախնական, անեղծ ու հարազատ տարրերը: Հնդեւրոպական, սեմական, Ուրալ-Ալտաեան լեզուներու հետ եղած համեմատութիւնները սրունցով այսօր հայերէն կարգ մը բառերու ծագումը ճշգրտած է, մեր պատրանքի այդ միամիտ ու խախտող չէնքը շատոնց փրկեցուցած են եւ այլ եւս կը հարկադրեն մեզ ընդունելու թէ նախադատմական եւ նախաժառանգորական ժամանակներու մէջ լեզուին բառերը կարգ մը փոփոխութիւններէ անցած են մինչեւ որ ասեր են իրենց սակեղարեան ձեւերը որոնց վրայ այնքան վարժուեր ենք հիանալու:

Այս պարագան ազդեցութեանը համար կը բաւէ նոյն խի կարգ մը բառերու պարզ քրննութիւնն ու աստուգարանութիւնը, առանց

զիմելու լեզուարանական խրթին համեմատութիւններու, զորօրինակ՝ ըստ բրօք. Մէյլի՝ սա, դա, նա, դերանուններուն հին ձեւերն էին առ, դո, նո, ինչպէս կը հասկցուի հոլովումներէն, առ-րա, դո-րա, նո-վա եւն. ըստ Հայր Գ. Մէնէվիշեանի ընկեր (=ընդ-կեր) ընտանի (=ընդ-տանի), ընկրիկի (=ընդ-կրունկ-իւ), ընթռնեղ (=ընդ-բռնեղ) բառերը մէյլէկ դառած են արդէն եւ վերջին երկուքը՝ ուրիշ փոփոխութիւններ աւերած, (համեմատէ ընդ-ոստ, ընդ-հատ, ընդ-գրիկ եւն. բառերը որոնց մէջ դ. ն կեցած է). ըստ Հր. Աճառեանի, հարսն, տասն, մասն, ակն եւն. բառերն ալ մէյլէկ ա կորսնցուցած են, որոնց հին ձեւերն էին հարսան, տասան, մասան, ական ինչպէս կը մահաբերուի հարսանիք, մասանի, մեսասան, ականաւոր, եւն. բարդութիւններէն. կը հասկցուի ուրեմն թէ դասական սա, դա, նա, տասն, հարսն, ընկեր, ընկրիկի եւն. արդէն իսկ աղաւաղեալ ձեւեր են եղեր: Դարձեալ՝ բազդատեցէք սա հետեւեալ համախոյ ձեւերը, օճան, օժան եւ օգան (կորսուած ձեւեր՝ որոնցմէ օժանդակ օգնեղ). — ծանօթ եւ ճանաչեւ, ու նմանօրինակ՝ անօթ եւ անաչեւ, աղօթ եւ աղաչեւ. — վից վաքսուն (=վեց+սուն) եւ վեշաստան (=վեց+ստան) — հեղեղ եւ ողողեւ, ծիծ եւ sիs, քուր եւ սուր եւն. եւն. Կրնայ կասկածուիլ թէ այս հոմանիշ բառերն ու ձեւերը միեւնոյն արմատէ չեն՝ իսկապէս իրարմէ եղանակաւորուած, կամ սովորական բառով՝ աղաւաղուած (1) . . .

(1) Իրարարի մէջ միեւնոյն բառին այս տարբեր ձեւերը ինչպէս նաեւ քերականական ձեւերու բազմաթիւ անմիօրինակութիւններ ցոյց կուտան թէ գրարարը միտքի չուներ իր մէջ, ինչ որ կը մեկնուի սա ենթադրութեամբ եւ ոսկեղարեան շրջանին մէջ արդէն իսկ հայերէնը բարբառներու բաժնուած էր եւ իւրաքանչիւր մատենագիր իր բարբառին վերաբերեալ ձեւերը կը գնէր իր գրութեանը մէջ, եւ նոյն իսկ Ե. դարու առաջին եւ երկրորդ կարգի թարգմանիչներու լեզուն իրարմէ տարբերութիւններ ունին:

Պէտք է ընդունել ուրեմն թէ՛ գրարարին բառերն ալ անպատճառ լեզուին նախնական եւ անեղծ ձեւերը չեն, թէ՛ անոնք ալ ո՛չ նուազ փոփոխութիւններ կրած են : Ծիշաբ խօսելով՝ բացարձակ իմաստով չ'աղաւաղուած, անեղծ մնացած բառ չկայ սրեւիցէ լեզուի մէջ : Լեզուներու բոլոր բառերն ալ կարգ մը ընդհանուր, կամ այս ու այն լեզուին յատուկ մասնաւոր ձայնարանական օրէնքներով եւ բազմաթիւ ազդեցութիւններու տակ հնչումի անթիւ փոփոխութիւններէ անցած են, եւ ամէնէն այլանդակ խեղաթիւրումները կրած են թէ՛ իմաստով թէ՛ ձեւով : Բայց ասոր համար աւստից եւ ո՛չ մէկուն արժէքը կը պահիս : Այս տեսակէտով ուրեմն յետին գաւառական — ռամիօրէն բառն ու սոկեդարեան քննակեղինի բառը հաւասար արժէք ունին լեզուաբանօրէն ալ, գրականօրէն ալ, եւ տրամաբանական վարմունք մը չէ մին արհամարհել ցելիքու մէջ նետել, եւ միւսն աստուածացնելով պաշտել :

Աւարկութիւն մը թերեւս պիտի ուզէին առաջ քել անոնք որ դեռ անպատճառ նախապատուութիւն մը տալ կուզեն հին հայերէնին, այսինքն թէ՛ գրարարի բառերը բազմապատկար նուազ աղաւաղուած են քան նոր հայերէնի բառերը, եւ թէ՛ հետեւորարդ դարար գտնէ յարաբերական հարազատութիւն կամ անեղծութիւն մը ունի՝ նախապատուութեան իրաւունքը վայելելու համար : Բայց ցտալի է որ ո՛չ իսկ այս պարագան բոլորովին ճիշտ է, քանզի եթէ կան գրարար շատ ձեւեր որոնք նորերէն աւելի հին են եւ բազմապատկար անեղծ, միւս կողմէ գաւառաբարբառներու մէջ ալ կան կենդանի բառեր որոնք նոյն բառերու սոկեդարեան ձեւերէն աւելի հին են : Ասիկա սակայն լեզուաբանական զննութեամբ միայն կ'ապացուցուի : Հարեւանցի դիտող մը գաւառաբարբառներու շատ մը բառերուն համար, որոնք քիչ շատ կը տարբերին միեւնոյն բառերու հին ձեւերէն, գրարարին աղաւաղումներն են թուելով պիտի անցնէր, բայց լեզուաբանական զննութիւնները շատ անգամ հակասակը կ'ապացուցանեն : Ասից զատ կարգ մը բառեր կամ արժատներ որոնք հին հայերէնի մէջ առանձին կեանք

առնենալէ զազրած են եւ որոնց հետքերը հազիւ մէկ-երկու բարդութեանց մէջ կ'երեւան, կը նայիս որ այս կամ այն գաւառաբարբառին մէջ պահուեր, պահպանուեր ու զարգացեր են : Ասոնց պատճառն այն է թէ արդի հայերէնի բարբառները գրեթէ կախում չունին գրարարէն եւ անկէ անկախ ուրոյն ձամբով կատարած են իրենց փոփոխութիւններու ընթացքը, այնպէս որ այսօրուան հայ բարբառներուն մէջ չենք կրնար մատնանիշ ընել հատ մը որուն համար կարենայինք վստահարար հաստատել թէ ուղղակի շարունակութիւնն է այն ճոխ բարբառին զոր մեր անմահ թարգմանիչը գրականութեան բարձրացնելով շինեցին սոկեդարու գրաբարը (*) :

Պիտի ըսուի գարձեալ թէ հին հայերէնի ձեւերն ի՛նչ ալ որ ըլլան, նոր ձեւերէն աւելի ներդաշնակ ու զեղեցիկ են եւ հետեւորարար արժանի՝ գրականութեան մէջ ռամիօրէն ձեւերուն տեղը բռնելու : Գեղեցիկ կամ տգեղ լեզուի մը նոր կենդանի ձեւերը հին մեռած ձեւերով փոխանակելու փորձին անտեղութեան վրայ չպիտի ծանրանամ, այլ պիտի բռնուի միայն թէ այդ պարագան ալ ճշմարտութիւն մը չէ միշտ դժբաղդարար : Ու համոզուելու համար ասոր՝ նախ ինկատ առնենք թէ լեզուներն ի՛նչ կերպերով ձայնարանական փոփոխութիւններու կ'ենթարկուին : Յայտնի է թէ այդ փոփոխութիւններն են 1. եղանակաւորումը զոր օրինակ՝ Ժամ եւ Ժում, թիւ եւ քառ (որոնցմէ թուիչ եւ քառիչ), կիթ եւ կաթ (որոնցմէ կթել, կթոց, կաթիլ, կաթել) եւայլն, 2. Ձայնաշրջութիւնը, զոր օրինակ՝ կոչ=գոչ, կշոռ=զշոռ (զիչ արմատէն) եւայլն, 3. Հնչյունի շնորհաւորումը, աճումը, զոր օրինակ ե-րանգ=րէնգ (պրսկ.) ե-արքիչ, մեմբ=մեք եւայլն, 4. Ձայնաւորումը, աճումը, զեղումը, զոր օրինակ .

(*) Յովսէփ Կարստ գերմանացի հայագէտը որ վերջերս գիրք մը հրատարակեց Կիլիկիան կամ Միջին հայերէնի վրայ եւ որուն նկատմամբ գրուեցաւ մեր Թերթերուն մէջ, բազմաթիւ օրինակներով ու լեզուաբանական ցուցումներով ջանացած է սպառնացանել Թէ Կիլիկիան ու դասական հայերէնը իրարմէ անկասկածաբար ձեւեր են, երկուքն ալ տուած եկած հոստարակաց նոխածեւէ մը, — նախահայերէնէ մը : Միեւնոյնը կրնայ ըսուիլ արդի հայերէնի զբաւարար բարբառներուն համար :

քմութիւնը—թմրութիւն (թմրիւն), որիւնը
=յուղարկել, փաշել=քարշել եւայլն. 5. նմա-
նաձայնութիւնը, զոր օրինակ՝ եղել=եղնել=
եղանել եւայլն. 6. երկարաբառներու եւ քա-
նախանքերու անկոխումն ու պարզումը,
զոր օրինակ՝ սեփականը=սեպհական, երկի
=այր-իկ, մեռել=մեռեալ եւայլն. 7. Գրե-
րու ճեղքափոխութիւնը. զոր օրինակ՝ սոր-
վիլ=սովորիլ=սովորել եւայլն. — Արդ՝ այս
բոլոր փոփոխութիւնները որ լեզուաբանա-
կան օրէնքներով տեղի կունենան, գիտելի է
թէ ընդհանրապէս կը միտին կա՛մ համառո-
տութեան կամ ներդաշնակութեան. Օրինա-
կով ապացուցանելու համար՝ առնենք, զոր
օրինակ, արտառութեամբ որուն նախ միջան-
կեալ ար համառոտութիւն եւ եղեր է արտառ,
եւ որովհետեւ քս տառախումբը անհանգու-
թելի է եւ միշտ կ'ստիպուի ցի, դարձեր եւ
ղեր է արցում. ներդաշնակութեան համար
մակարոյժ ն ու մըն ալ աճեր եւ յանգեր է իր
նորագոյն ձեւին՝ արցումի որ ըստ իս արտա-
սութեն շատ աւելի գեղեցիկ ձեւ մըն է. Գործ.
եալ՝ եղբայր բառին դը խի փոխութիւն,
ու յետոյ՝ ներդաշնակութեան համար առա-
ջին վանկը երկրորդին նմաներ ու առաջ ե-
կեր է նոր ախարար ձեւը որ չեմ գիտեր
ինչո՞ւ եղբայրէն աւելի գեղեցիկ չըլլայ⁽¹⁾.
Ինչո՞վ պիտի մեկնենք հին հայերէնի երազ
ձեւին քով արագի մըն ալ գոյութիւնը, եթէ
ոչ՝ ձայնաւորներու ներդաշնակութեան օրէն-
քով⁽²⁾ :

(1) Եղբայր եւ նմանօրինակ հայր, մայր եւն. բառերը
այսպէս գրուելով հանդերձ կը հնչուէին կանխաւ իրեւ
եղբայր, հայր, մայր. Զանազանութիւնը աւելի կարծեւ եւ եր-
կար հնչման մէջն էր. Արդի հայերէնի մէջ երկայն ա (այ)ը
չի զանազանութիւն կարծեւ ա էն, ոչ ալ երկայն Է (ե=է)ն
կարծեւ Է էն. Քանի մը գաւառաբարբառներու մէջ ալ այ կը
հնչուի իրեւ Է. զոր օրինակ հէր (հայր), մէր (մայր),
ձէն (ձայն), եւայլն.

(2) Նախագիր Է եւ ա հայերէնի մէջ համարժէք մաս-
նիկներ են որոնք շատ մը բառերու սկիզբը կերեւան (հա-
մեմատէ Է-րակ, Է-րեց, Է-րամ, ա-միս, ա-մուս, ա-շակեց,
եւն.), որով կրնայ նոյն իսկ ենթադրուիլ թէ ախարար եղ-
բայրին փոփոխութեամբ չէ, ոչ ալ արագը՝ երազին, այլ
զատ քոր ձեւեր են, իրարու ժամանակակից :

Կարելի էր բազմաթիւ օրինակներ մէջ բե-
րել այսպիսի նոր ձեւերէ որոնք հին հայերէ-
նի ձեւերէն աւելի գեղեցիկ ու ներդաշնակ են
եւ որոնք իրենց ներդաշնակութիւնը կը պար-
տին վերը յիշուած հնչումի փոփոխութեան
միջոցներէն մէկուն կամ միւսին, այսինքն ա
դաւադման մի որով աշխարհ կը խորացին մեր
հայկաբան պատուելիները. բայց չեմ ուզեր
աւելի երկարարանել. սա չափի միայն կա-
ւեցնեմ թէ կարծեմ նոր գրականացած լե-
զուներուն մէջ չկայ լեզու մը ա՛յնքան այ-
լանդակօրէն աղաւաղուած որքան Փրանսե-
րէնը (բազմաթիւք միայն chaud շո միաժանկ
ձեւը լատիններէն calidus եռաժանկին հետ)
եւ սակայն կարծեմ չկայ մէկը որ ուրանայ
ներդաշնակութիւնն ու գեղեցիկութիւնը այդ
լեզուին որուն վրայ մեր աղջիկներն ա՛յնքան
հոգի կուտան :

Այս գիտողութիւնները կարծեմ բաւական
են ապացուցանելու թէ կարծուածին չափ
ուրեղ չեն նոր հայերէնի այն աղճատ ձեւերը
զորս ոմանք դեռ կը յամառին ա՛յնքան ար-
համարհանքով նկատել, եւ թէ այնպէս քմա-
հաճ ու դիպուածական չեն այն բոլոր աղա-
ւաղումները որոնց ենթարկուելու են տանք,
այլ ձայնարանական օրէնքներու տակ կա-
տարուած փոփոխութիւններ՝ որոնցմէ ո՛չ մէկ
լեզու զերծ մնացած չէ. Իրաւ է թէ առմի-
ջէնի մէջ խժալուր եւ տգեղ ձեւեր ալ կան,
բայց ո՛չ նուազ կան նաեւ գրարարի մէջ,
մնաց որ աւանդի վարժութեան խնդիրներ են
ստոնք. Ռամկօրէնին գլխաւոր աններդաշնա-
կութիւնը որ ամէնէն աւելի աչքի կը զարնէ,
աւելի անխնայ կրճատումն եղած է որով
քանի մը բաղաձայններ իրարու կը բազմաթիւ
հնչումը կը դժուարացնեն երբեմն (զորօրինակ
նիւնդնալ = հիւանդանալ), բայց պէտք է
բաւել թէ աւելի այս ջնջումը գրաբարի օրե-
րէն ի վեր սկսած էր լեզուին մէջ :

ՅՈՒՂ ԳԱԶԱՆՃԱՆՆ

(Բ. մասը յաջորդ Թիւով)

ՏԵՐՈՒՐ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ

Կը լրսեմ հովն որ կը հեծէ օդին մէջ :
Լըփուած ջուրակ մ'է ան մութին մէջ առկախ .
Սառած մասեր կը դողդրդան ելեւէջ
Անոր սրտին վըրայ հիւանդ , անբաբախ :

Ծովը մօտ է . մեծ յուզմունքներ ունի ան :
Ծընծղայ մ'է ան՝ որ կը շըչէ անդաւանակ :
Կարապները ալիքներուն մէջ կ'իջնան .
Ու հին ծընծղան կը հանէ քաց ձայներ խակ :

Դանդաղ շիթերն ալ անձրեւին , կոտրած սրինգ ,
Նըրբին խազեր կ'աւելցընեն բիրտ նուագին :
Իսկ , հեռուն , բու մը կը վայէ դեպ երկինք .
Սարսափն հոգւոյն որ կը լըլիի ցաւագին :

Յոգնած սիրտը կը սեղմուի , տարակալ :
Ան հոր մըն է պարապ , մամռով բոլորուն :
Միայն անցեալն հոն կըրկնելու մերթ կու գայ
Թօշ արձագանցն իր լացած հին երգերուն :

ՎԱՅԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ԱՂԶԿԱՆՑ ՆԱՄԱԿԱՏՈՒՓԸ



Նամակներու անձրեւ մը կը տեղայ գրել-
խուս , եւ որուն չգիտեմ ինչպէ՛ս վերջ մը
դնել . Հիմայ կ'անդրադառնամ անխոհմու-
թեանս՝ որով փչեցի մոխիրներու վրայ . ա-
ռանց կասկածելու անոնց տակ քնացող կայ-
ծերուն գոյութենէն :

«Տիկին Արմինէ , սիրելի բոյրս , կը ծա-
փահարեմ եռանդիդ , աշխատակցութեանս
վստահէ՛» — ու ասոր նման դեռ շատ մը գի-
րեր , զորս պարբերաբար կ'ընդունիմ թղթա-
բերէն , եւ զորս միօրինակ անկանոնութեամբ
անպատասխանի թողուցի մինչեւ այսօր :

Նոր տարին առթիւ ցրուիչին գանգատ-
ները — տուած սովորական պարզեւս քիչ կը
գտնէր այս կազանդին համար — սթափեցու-
ցին զիս եւ՝ այս անգամ շահու մէջ խայ-

թուած՝ չափեցի անքաղաքավարութեանս մե-
ծութիւնը :

Խնդրած էի դպրոցական նախկին ընկե-
րուհիներէս — որոնք դեռ չեն գտած ա-
մուսին — որպէս զի իրենց եւ իրենց վիճա-
կակից բարեկամուհիներուն սպասողական
կեանքէն մէկ քանի տպաւորութիւններ հա-
ղորդեն ինծի . համառօտ թղթակցութեամբ մը

Իմացուցած էի ասոնց թէ նմանօրինակ դի-
մում մըն ալ ըրած եմ իրենց աւելի բարե-
բաստիկ — այսինքն ամուսնացած — սեռա-
կիցներուն քով՝ իմանալու համար անոնցմէ՝
ամուսնական կեանքին հրապոյրները :

Ընդունած պատասխաններու թիւը , որ
ակնկալութիւններէս վեր եղաւ , կը ստիպէ
զիս աշխատութիւնս երկուքի բաժնելու , ու

րով կը գտանեմ այսօր Աղջկանց Նամակա-
սուփը՝ Կանանց Նամակասուփէն :

Դարձեալ՝ անկարելի կը գտնեմ ամբողջու-
թեամբ արտագրել հոս՝ ընդունած բոլոր
նամակներուս սրբաւնակութիւնը. նախ՝ որով
հետեւ՝ ամէնքն ալ հաւատարմօք չաճեկան
չեն, յետոյ՝ լուսագոյն կը սեպեմ զգուշանալ
կարգ մը անգաղտնապահութիւններէ որոնց
առջեւ չուարած չեն — անսովոր crânerieով
մը — մէկ քանի «գարավերջիկ» թղթակցու-
հիւնքս :

Ինչ որ յուշատետրիս մէջ նշանակեցի օրը
օրին՝ իրր նշանակելի գաղափար մը, մտքի
զարգացման նշան մը, հոգեկան մասնաւոր
վիճակ մը, զայն միայն կ'արտատպեմ հոս,
իբր անկատար կամ հեռաւոր ուրուագիծեր
կեանքի պատկերներու :

Անտարբեր չի մնացի սա մանկամարդ սե-
ռակցիս՝ որուն ծնողքը «երէկուրնէ ի վեր»,
ինչպէս կ'ըսէ, արտօններ են զինքը երկար
քղանցքով չըջալկնող կրեւը :

«Ատելութիւնը զոր կը գգում փառակազմ
գիրքերու համար՝ չեմ կարող ձեզի բացատ-
րել : Կը յիշեցնեն ինծի պարզեւարաշխութե-
նէն ընդունած վարդապոյն կողքով, ոսկեզօծ
եզերքով հատորներս՝ զորս տարի մը ամբողջ
ցուցադրեցի մեր ընդունելութեան սրահին մէջ.
երբեմն դաշնակիս վրայ, երբեմն սեղանի մը
առաջ երկնցած անկիւնը՝ սպասելով, ամէն ա-
յցելութեան, պատեհ ժամանակին, երբ բարե-
շնորհ երկատասարդ այցելու պարտն մը պիտի
կարգար — սրտիս նման պարապ էջի մը վրայ
գրուած — սա ձօնը. *Մրցանակ Տարրաշուժու
Քեան առ Օր. **** : — Հաւատա՛, հոգիս, այդ
պատկերազարդ գիրքերու փորագրութիւննե-
րուն միայն զմայլեցան եւ չեղաւ մէկը՝ որ
այդ ձօնէն ներշնչուելով՝ կարդար նաեւ աչ-
քերուս մէջը, ու հոգիս տարրալուծէր : »
Իսկապէս, կը մասնակցիմ՝ ատելութեանդ,
անուշիկ օրիորդս, գիտցիր՝ սակայն՝ թէ երկ-
սայրաբանութեան մը մէջ մնացած եմ : Եթէ
ճանչնայի՝ — գէթ անունը քեզի հաղորդելու
համար — իմաստութեան յետագայ տիպարը՝
ուրկէ կը գանգատի քեզիմ ոչ նուազ շնորհալի
աղջիկ մը :

«Աղջիկ մը ինքն իրենր՝ գնահատել տալու
է իր արժանիքը, կը կրկնեն ամէն օր : Իրաւ
է, շատերը արժանիքէ վտրի չեն գտներ զիս :
Բայց երբեմն այրերու հարցափորձերէն կը
չուարիմ : — Ինչ է ձեր գլխաւոր զբաղումը,
կը հարցնէր դեռ երէկ պարտն մը, մասնա-
ւոր համակրութեամբ մը՝ որուն անտարբեր
չէի : — Տան խնամք, կարգապահութիւն,
կար, ձեռագործ, պտոյտ՝ գեղեցիկ օգին,
դեռ ի՞նչ ըսէի : — Մտաւոր զրազումներդ,
օրիորդ, կը կրկնէր անխիա կարծես զիս նեղը
դնելու նպատակով :

«Լաւ գիտէր թէ դաշնակահար, երգիչ,
գձազրիչ, վիպազիր չէի : Ծարահատ՝

« — Բանաստեղծութիւնն է, պարտն, ըսի,
մեկամաղձոտ չեմ գիտեր ինչ մը դնելով ձայ-
նիս եւ նայուածքիս մէջ :

« — Եթէ քերթող էք, ատի մտքի դրա-
կան գործունէութիւնը չէ, քանի որ ամէն
մարդ երազելէ կ'ախորժի » :

«Օգնութեան հատիւր, Տիկին Արմինէ, եւ
զիտցո՛ւր ինծի թէ ո՞րն է աղջիկէ մը սպաս-
ուած մտային դրական զբաղումը » :

— Խնդիրը, քուրիկս, կարճածիղ չափ
պարզ չէ եւ երկայն զրիւ չեմ կրնար : Սրէն-
սէր բաժն է թէ՛ մարդկանց սրտին մէջ սէր
արծարծող տարրերէն ամէնէն զօրաւորը՝ ար-
տաքին առաւելութիւններն են. թէ բարոյա-
կան յատկութիւններ արտագործ տարրերը՝
երկրորդ կարգի կուգան, թէ ամէնէն տկար
տարրերը՝ մտային հրապոյրներու արտագործ-
ութիւններն են, եւ թէ լուսագոյն է որ ասոնք
ուսմունքէ աւելի՝ մտքի արթնութեան, նրբ-
բամուսութեան եւ սրամտութեան մէջ կայա-
նան :

Եթէ դեռ շատ ուշ չէ, գտիր de L'Educa-
tionը, կարգա՛, եւ մի՛ յուսահատիր մարդդ
վերստին ձեռք ձգելէ : Արտաքին առաւելու-
թիւններդ ինքնին պերճախօս են՝ անշուշտ :

Ինքնաճանաչութեան հով մըն է որ կը
փչէ հետեւեալ տաղերուն մէջէն.

«Թո՛ւղ բռնի, ի՞նչ որ կ'ուզեն : Հայ աղջկան
առտնին կայութիւնը անտանելի է, եթէ ոչ
ստորնացուցիչ :

«Պատառ մը հաց եւ տարին երկու ձեռք

զգեստ ունենալու համար ամբողջ կեանք մը մաշեցնել . . . տնտեսան անվերջանալի աշխատութիւններու մէջ, բնկերական աննշան յարարերու թիւններու մէջ, անորոշ եւ աննպատակ :

«Հազար անգամ կոչում բրի անհատականութեան» զոր, աւա՛ղ, մեռած կը գրտնեմ, գործունեութենէ զտրել միջավայրիս մէջ :

«Օր մըն ալ հայրս պիտի զարնէ սենեկիս դրանը, աւետելու համար թէ այս ինչ պարտնք «ձեռքս կը խնդրէ», մարդ մը որուն — եթէ ճանչնայի — ոտքս անգամ չպիտի տայի :

«Անկեղծ եղիր, Տիկին Արմինէ, եւ բո՛ւ ինծի թէ ուրիշ ի՞նչ բանի մէջ կը կայանայ անհատական արժանապատուութիւնը, եթէ ոչ շահարեք, պարկեշտ գործունէութեան մը մէջ, ուրիշի ձեռնտուութեանը չի կարօտելու համար :

«Յօժարութեամբ պիտի թողտիտուն, տեղ տէ՛ն ինչ, զալու եւ քեզի հետ աշխատակցելու համար :

«Օրագրութեան մէջ կա՞յ յարմար տեղ մը ինծի համար» :

— Պիտի ջանամ, սիրելիս, քեզի համար զիտումներ բնել խմբագրագետներու քով : Սպասելով ուղարկութեամբ հետեւէ հրապարակագրութեան գանդամներուն թէ մեծ բան մը չեն վատակիր : Լաւագոյն մեղմացուցիչ մը (calmant) պիտի չկարենայի յանձնարարել քեզի :

Մէկ քանի սրտայայտ շնչտեր, համակերպութեամբ լեցուն :

«Հինգ տարիէ ի վեր վարժուհի եմ աւանդակարգ դպրոցի մը մէջ : Ունեցած յաջողութիւնս օրինակ եղաւ շատերուն՝ որոնք տակաւ առ տակաւ խճողեցին հրապարակը եւ ամսաթիղջակները իջեցուցին : Կը կարծէք թէ վարժուցիտներուն թիւը անբաւական էր, որ վարժուհիներ ալ հրապարակ նետուէին :

«Վնասակար մրցում մըն է որ տեղի կ'ունենայ :

«Լաւագոյն պիտի ջրլա՞ր եթէ իմ երկու հարկը յիսուն գահեկանի ամսական տեղ նար այդ դատատուի մը արդի վատտակին վրայ, եւ ես՝ անոր կինը ըլլայի, տունը

խնամէի, բարի զաւակներ հասցընէի, վերջապէս ունենայինք, երկուքս ալ, մեզի յատուկ բոյն մը՝ ուր գորգօրայինք իրարու վրայ : »

— Ստուգիւ, քողցր տատրակս, ինչո՞ւ այդպէս չէ . . . :

Ես ալ, քանի անգամներ ինքնիրենս այս հարցումը բրած եմ, ամուսնանալէ առաջ, երբ քեզի պէս կը դատէի :

Յետոյ «խոտովանութիւն մը» — խոտովանութիւն մը . . . որուն համար ինձմէ գտնանապահութիւն չէ պահանջած թղթակիցս :

« . . . այսպէս գանդատիր՝ շատ դառն է ինծի համար, սիրելիս : Որչա՛մ աւելի երջանիկ պիտի ըլլայի երախտագիտութեամբ խօսելու մօրս վրայ : Գիտցի՛ր, սակայն, թէ այլանդակ աւելորդապաշտութիւններով խճողում են մեր՝ աղջիկներուս՝ միաքերը եւ սիրտերը : Ի՞նչ դժուար գործ՝ ասոնք արմատախիլ բնելը :

«Եթէ ձեռքէս գար՝ քերականութեան դասերը անգամ կը փոխիսէի, իրենց ցըցուցած անմիտ օրինակներուն համար, որոնցմէ մէկը՝ ահա .

Ես և հայր իմ մի եմք

որ թերի է, քանի որ չի ցոլացներ աղջկան մը զգացումը որ պիտի ըլլար, եթէ իմ վիճակս ունենար,

Ես և մայր իմ երկու եմք :

«Այս դառն գիտար . . . երանի՛ թէ բրած ջրլայի : Երեւակայէ՛ առօրեայ մրցում մը՝ մօրս եւ իմ միջեւ՝ որուն վերջը ո՛ւր պիտի երթայ, չեմ գիտեր : Բայց, ա՛լ պոսթկացի՛նք :

«Ճանչցայ, աւա՛ղ, մայրական սէր մը որուն օրինակը չէի տեսած Հասընսիո՛ Քաղուածի՛ն մէջ :

« — Ո՛չ, պոռաջ մայրս երեսիս, այդ պարտնք գործիս չի գար, քեզի չի յարմարիր՝ պիտի շառնե՛ս : Մարդ մը որ ո՛չ զուարճանալ գիտէ, ո՛չ ծախսել : Ա՛՛՛՛ն որ գործին, խելքը միտքը խնայողութեան . . . ի՞նչ, տունս վա՞նք պիտի գարձնէիր :

«Հնազանդ աղջիկ մըն եմ եւ լեցի, կա՛ս

տաղութիւնս զսպելով : Շարաթ մը վերջը՝ պարահանդէսէ կը վերադառնայինք գիշերը : Ես զուարթ էի բարեկամներու հետ անցուցած ուրախութեան ժամերէս . մայրս յոգնած էր՝ զուարճանալէն ու պարելէն : Մեզի ճոխ *souper* մը հրահանգէ վերջը . Եանիի մէջ , ուր տասնի չափ բարեկամներ հաւաքուեցանք սեղանին շուրջը , Միսիւ Գառնիկ մեզի բնկերացաւ , մինչեւ տուն : Մայրս՝ թեւը թեւիս մէջ , սենեակս տարաւ զիս . շրթունքներէն մեզր ու կաթ կը վազէր այս անգամ :

« — Աւելի յարմար չէ՞ մեզի սա Միսիւ Էտկաուր , փափաք աւանջէս վար , երեսներս համբուրելով : Դուն ալ տեսար որ *gentleman*ի պէս ծախսեց . տուանց համբուրու :

« — Դիշեր բարի , աղջիկս , երջանիկ ե . զիր , այս միայն կը փափաքիմ՝ քեզի համար : »

« . . . անկէ ի վեր , Միսիւ Էտկաուր խոտաացաւ որ զիս պիտի առնէր . . . »

— Բանի որ խոտաացաւ , անուշիկս , յուսա՛ :

Բացօթեայ կեանքի տիպար մը , լաւատես :

« Հարցմանդ կը պատասխանեմ , Տիկին Արմինէ , անքաղաքավար չրլալու համար :

« Բայց խիստ քիչ բան ունիմ ըսելիք :

« Բնաւորութեամբ՝ զուարթ , առողջութեամբ՝ լաւ օժտուած , կեանքէս գոհ , կը խորշիմ սիրամաշուք մտածումներէ :

« Օր մը պիտի պատահիմ , անշուշտ , մարդկային արարածի մը , որ ինծի պէս ունենայ . կուրծքին տակ , զգայուն սիրտ եւ տաք շունչ :

« Հայրս չաճապարէր եւ երջանիկ է ինձմով : Միշտ գեղեցիկ եղիր , աղջիկս , կ'ըսէ , եւ Զանա՛ բարի ամուսնութիւն մը բնել : »

— Զանա՛ նաեւ՝ քեզի նման զուարթ եւ առողջ զաւակներ ունենալ , բազմաթիւ :

Բնութիւնը՝ քու լանջքերուդ մէջ պահեր է երջանիկ ապրելու գաղտնիքը :

Գանձ մըն է այդ՝ որուն նախանձախնդիր եղիր , եւ ընդունէ մաղթանքներս բարօրութեանդ համար :

Բերա

ԱՐՄԻՆԷ

« Սուբհանգալ » հրատարակեց իր չորեքշաբթիի թիւով՝ պատկերը Մհր. Կարապետ աղա Խուպէնդեանի , Կեսարացի բարեգործ ազգայինը որ երկու ամիս առաջ մե.աւ իր ծննդավայրին՝ Թաւառ գիւղին մէջ , 3000 ոսկի կտակելով մարդասիրական , եկեղեցական ու իրթական ազգ. հաստատութեանց :

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԷՆ

Ան տարին 20 հազարէն պակաս չէին ամենազգի ուխտաւորները Երուսաղեմի մէջ , որոնք բոլորը մէկէն Ս. Յարութեան տաճարը լեցուած էին Ծաղկազարդի հանդէսը կատարելու որ , մանաւանդ անոր համար տիեզերական հանգամանք մը ունէր , զի Լաւինայ Ծաղկազարդն ալ մերինին հետ կը զուգահիւսէր :

Քրիստոնէութեան վեհագոյն տաճարին մէջ միջիւնի նման իրարու վրայ խոնուած այդ քսան հազարի բազմութիւնը որ ռաք փոխելու տեղ չունէր եւ իրարու շունչէն հեղ-

ձաղձուկ ու ձայնի ժխորէն լսողութիւնը կորանցնելով խուլ բլլալու վիճակի մէջ էր , ամբողջը մէկէն յանկարծ եղեկարական հոսանքէ մը զարնուելու պէս բնորոտ ցնցուեցաւ սաստիկօրէն , երբ Սթենտորեան քեհօր ձայն մը կոկորդալի որ ժգնութեամբ մը գոռացուց հինաւորաց տաճարին գոգաւոր կամարները եւ անոնց վրայի երկնաբերձ ու լայնալիճ գմբէթը՝ հեշտանուազ գեղգեղելով « Ո՛ր՝ վ՛ե՛ր՝ օ՛ր՝ ճ՛ն՛ւ՛ . . . յաթուռ փերովրէից » եղանակը : Հայոց թափարին ձայնն էր ան , որ կը սկսէր Ս. Գերեզմանին շուրջը , ինչպէս սկսած էին

ճիշդ միեւնոյն ժամուն ու բազմին Յունաց ,
 Լատինաց , իսպաներու , Ասորաց եւ Հա-
 պէշներու թափօրները , իւրաքանչիւրը եղա-
 նակելով իր եկեղեցական երգը կամ շարա-
 կանը : Բայց մեր շարականին այդ գեղեցիկ
 օրհներգին հիմնադիր զեղեցիկութեամբ որ անդնդա-
 խոր ու լայնակամար քարանձաւէ մը արձակ-
 ուած գալարափող շնորհիւ մը ելեւէջաւոր ձայ-
 նին ապաւորութիւնը կը թողուր՝ դարաւոր
 կամարներու առթած որոտալիւ արձագանգ
 ներուն պատճառով , 20 հազար հոգին մէկ
 մարդու պէս քարացուց եւ ստիպեց ուշա-
 դրութիւն դարձնել զէպի այն կողմը ուսկից
 կուգար այդ ձայնը որ կը գերազանցէր բոլոր
 միւս ձայները ու աղաղակները , նոյն իսկ
 եռացող դեռացող ամբօրին հանած ժխորն ու
 աղմուկը :

Այդ այն տարին էր որ Ամեն . Տ. Յարու-
 թիւն Ս. Պատրիարքը առաջին անգամ ներկայ
 կ'ըլլար Ծաղկազարդի հանդէսին Ս. Յարու-
 թեան տաճարին մէջ՝ իրեն Պատրիարք Երու-
 սաղեմի , զի նախորդ ամառը զեռ նոր թողած
 էր Կ. Պոլսոյ Պատրիարքական աթոռը եւ
 եկած էր բազմելու Ս. Քաղաքի առաքելական
 աթոռը : Ուստի , Ս. Յակոբեանց միաբանու-
 թիւնը որ քանի տարիէ ի վեր զուրկ էր իր
 հոգեւոր պետէն , նոյն տարին առաւել չքով
 կը ներկայանար կրօնական այդ համախար-
 հային հանդիսավայրին մէջ , թափօրապետ ու
 նենալով նոյն ինքն Պատրիարքը , ինչպէս ու-
 նէին Յոյնք եւ Լատինք իրենց Պատրիարք-
 ները , իւրաքանչիւրը իր թափօրին գլուխը :
 Այս պատճառաւ Հայոց կրօնական հանդէսին
 չքեղութիւնը ու փայլը սովորականէն զգալի
 առաւելութիւն մը ունէր , ինչպէս կ'ըլլայ
 տան մը մէջ երբ իր պետը ներկայ ըլլայ իր
 սեւէ հանդէսին : Աւելորդ է ըսել թէ ամէն
 պատրաստութիւններն ալ պարագային մեծ-
 վայելչութեան համեմատ խնամով տեսնուած
 ըլլալով , առաջին անգամ Որ վեր օրհնիւր
 միայնակ երգելու համար ընտրուած էր բոլոր
 միաբանութիւնէն ան՝ որ աւելի կորովի ձայն ,
 երկար շունչ եւ խորօտ շեշտ ունէր , եւ այդ
 պատիւը կը վայելէր Մատթէոս վարդապետ
 Գայրքճեան (այժմ Տեսուչ ի Պէտրոթ) զոր նա-
 խորդ ամառը իբրեւ հիւր հոն գտնուող եպիս-
 կոպոս մը ռակելովորդ կոչած էր ռակելեան

Մատթէոս վարդապետի մեծաբանութեամբ եւ
 որոտափայլ ձայնը լսելուն առթիւ , — ձայն մը
 որ այդպիսի ահագնազորութեամբ միայն
 լսելի ըլլալու եղանակն առաւելութիւնն ունե-
 նալով՝ ճիշդ պարագային համեմատ փնտռուածն
 էր :

Սակայն , միայն մէկ մարդու ձայնէ ցրն-
 ցուող այդ երկու բիւր մարդիկ նշմարելուն
 պէս թէ միակ կոկորդէ մը կ'ելլէր այն մե-
 ծաղկորդ աղաղակը , այնպէս պարուրածեւ
 օղակներով , կարծես զայրացան , չուզեցին
 այլ եւս կարեւորութիւն տալ . ու իրենց
 բռնուած շունչը աղաւ ձգելով՝ շարունակել
 սկսան իրենց սովորական եռուղեւորմը ,
 չչուկ շմորը եւ աղմուկ ու ժխորը , Բայց ահա
 յանկարծ հօթը եպիսկոպոսներու , 40 վար-
 զապետներու , 12 սարկաւագներու եւ 50 ի-
 չափ զպիրներու համաներգչանակ ձայնը որ
 մէկ կոկորդէ ելածի պէս միապաղաղ այլ ա-
 հաւոր ուժգնութեամբ յաջորդեց Մատթէոս
 վարդապետի մենանուագին , նոր ու աւելի
 սաստկութեամբ ցնցեց բովանդակ ու խառաւոր-
 ները , հնչեցնելով տաճարին կամարները ա-
 հագին արձագանգներով : Այդ վայրկեանէն
 վճռուեցաւ թէ օրուան երգեցողութեան յաղ-
 թանակի շուքը Հայոց թափօրին կը վերա-
 պահուէր , ի զուր Յոյները եւ Լատինները
 սաստկացուցին իրենց ձայնը , ի զուր աւելի
 ուժգին հնչեցուցին զանգակները : Մեր եր-
 գեցողութիւնը կը բարձրանար , կը գլէր ,
 կ'անցնէր ու կը խափանէր պարզապէս բո-
 լոր միւսներուն երգերը ու ձայները : Լա-
 տինք , սակայն , պահեստի ոյժ մը ունէին ,
 ուսկից զուրկ էին Յոյները : Սկսան ան-
 զագոյ շառաչմամբ դռապնել իրենց երգե-
 հանը՝ ձայնակցութեամբ 12 զիջ ձայնաւոր
 աղաքներու : Ասիկա տեսնելով , Յոյները՝ որ
 ինչպէս Հայերէն նոյնպէս եւ Լատիններէն
 վար մնալ չէին ուզեր , ամբողջ մէկէն զար-
 նել կամ զօգանջել տուն իրենց բոլոր զան-
 գակները որոնք մէյմէկ կաթնալի վիթխարի
 մեծութիւն ունին : Այլ եւս խնդրը իւրա-
 քանչիւր ազգ իր ձայնը լսելի ընել տալուն
 վրայ չէր , այլ միւսներունը խափանելու եւ

իրմէ գերագանցելն արգիլելու վրայ : Բայց մեր թափօրին հանդիսական ցնացքը կը շարունակէր դառնալ ու դառնալ սիգաճեմ Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջը մեծաշուք փառաւորութեամբ , զի 110 կոկորդներէ ելած միանուագ շեշտ ու ձայնը կը բաւէր ապահովելու իր յաղթանակը բոլորին վրայ : Նոյն

տարուան 1200է աւելի հայ ուխտաւորներու զգացած հոգեւոր ուրախութեան եւ սրտազին պարծանաց չափ ու սահման չկար , եւ կարելի չէ որ անոնցմէ մէկը մոռնայ այն օրուան յիշատակը , ինչպէս չէ մոռցեր ու զեռ երէկուան պէս կը յիշէ եւ միշտ պիտի յիշէ ան որ այս առօրեայ կը գրէ :

Մ. ՆԱԲԱՆԵԱՆ

ԱՂԱԽՆԻՆԵՐԸ

(ՊԱՐԶ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ)

Անձրեւր յորդառատ կը տեղար եւ փոթորիկը կը մանչէր հովիտներու խորշերէն : մառախուղի քօղեր կը ծածկէին լեռներուն բարձունքը , եւ մոտաւորաւ ձմեռը արդէն իր զօրութիւնը կը ցուցնէր աշունէն :

Դղեակին սենեակներէն մէկին մէջ , լսիկ նստած էին Ֆօն Երլաուի պառնոն հին եւ իր աղջիկը , Լիզզի : Նոյն օրը տարաւելիք թիկ նախնի մը համար հազիւ վերջացած ասեղ նագործութեան մը պրկուած ժապաւէնները հանելու զրազած էին : Զտարթ մայրը ճարտարութեամբ կը խլէր ժապաւէնները , ոչ միայն արտեսաւն արդիւնքին վրայ ուրախանալով՝ այլ իր սրգւոյն Ալֆրէտի համար , որ երբ յաջորդ իրիկունը վերագառնար՝ ուրախ պիտի ըլլար իր գրասեղանին առջեւ գտնելով այն հանգստաւէտ ու վայելուչ աթոռը ուրուն երկար ժամանակէ ի վեր կը ցանկար : Լիզզի չէր մասնակցէր մօրը այս ցնծութեանը , եւ կը մնար տրտում ու գոհացած :

Լիզզի եւ Ալֆրէտ երկուորեակ էին : Իրենց ծննդեան օրէն ի վեր զարմանալի համակրութիւն մը զօգած էր այդ երկու տղաքը վրտի եւ ուրախութեան , հիւանդութեան եւ առողջութեան ժամերու մէջ , — համակրութիւն մը որ յաճախ կը յուզէր ծնողքը լսին զուարթութեամբ , բայց նաեւ յաճախ անոնց սրտին մէջ կ'արթնցնէր երկիւղալի հոգեր , որովհետեւ այն անբարեկամ համաճայնութիւնը որ քրօնքով եղբոր միակէնութեան մը կերպարանքը

կու տար՝ մէկ կիսուն վրայ եղած ազդեցութիւնը միւս կիսուն վրայ եւս կը ներգործէր այնպէս որ Լիզզի՝ Ալֆրէտի կեանքէն անջատուած կայծ մը ըլլալ կը թուէր : հետեւաբար ի գոյր չէր որ վրդովիչ մտածումներ կը պաշարէին իրենց ծնողքը , այսինքն թէ մէկ գտակին կորուստը կրնար միւսն ալ խլել :

Երկուստարգական զուարթ առուզութեամբ երկուքն ալ իրենց տասներութերորդ տարին հասած էին : Իրենց խաղերը նոյնը եղած էին մանկութեան մէջ , նոյնն էր եղած նաեւ իրենց կրթութիւնը , որքան որ ապագայի սրտման զանաչանութիւնը կը թոյլատրէր , եւ քնքշէ քրօնք համար դժուարին օրեր ծագեցան երբ իր եղբորը ոգին առնական կորուզով մը զորդանալով՝ իր քովէն հեռու , ժայռերու վրայ , անտառներու մէջ , յանդուգն վարժութեանց միջոց զայն յաճախ : Ամէնէն վշտալի պարագան այն եղած էր , սակայն , երբ նախորդ տարին որոշուած էր որ Ալֆրէտ Համալսարան երթայ : Ամէն պատրաստութիւններ սկսան հետզհետէ կատարուիլ , եւ Լիզզի ինքն ալ մանր մունր կարգապարտութեանց օգնելու պարտաւոր էր եւ ստիպուած ինքզինքը համոզելու թէ այս արտաքին պէտք էր ըլլար ուրիշ ելք չկար , հարկ էր որ եղբայրը մեկնէր :

Ո՛հ , ի՞նչ արցունքներով ողորուցան այն գեղեցիկ կերպանները , այն սիրուն փողկապները , զորս գորովալից աշխուժով մը կը

պատրաստէր Լիզդի իր Ալֆրէտին համար : Զրաժեշտի օրը , այն աննուաճ երիտասարդը մեղկացած էր , քաղաքացիի փայլուն կեանքի ապագայ հեռագատկերին իրեն առթած ուրախութիւնը նսեմացած էր՝ իր խանդակաթ ծնողքէն եւ իր սիրելի քրոջմէն բաժնուելու մտածումին տաջեւ , եւ մինչ բաժանումը մօտեցաւ , մինչ այլեւս միակ զիշեր մը մնաց հօրենական զղեակին սովորական կեանքին եւ բոլորովին տար աշխարհի մը միջեւ , հանդիսաւոր ձայնով մը խնդրեց իր քրոջմէն որ իրեն հետեւի՝ իր սենեակը երթալու համար : Գնաց անոր հետ եւ զարմանքով բնկրկեցաւ Լիզդի , որովհետեւ այն սեղանին վրայ , որուն տաջեւ սովոր էր նստիլ իր եղբորը հետ՝ մեծ վանդակ մը կը դառնէր եւ մէջը երկու սիրուն վայրի աղաւնիներ , կարմրախառն ու մոխրագոյն , վիզերնուն չորջը սեւ օղակներն երով : Ուրախութեամբ մնջեցին անոնք , եւ Ալֆրէտ վանդակը բացաւ , ու նախ արուիկը կանչելով Ալֆրէտ անունով՝ մատներուն վրայ ոտստտել տուաւ եւ այսպէս իր քրոջը յանձնեց զայն . յետոյ փետրազարդ Լիզդին գուրահաւիւրեց եւ ծիծաղելով անոր ուսերուն վրայ դրաւ : Քնքոյշ անասնիկները զուարթութեամբ թեւերին բախեցին , եւ զոյգ մը ցօրենի հատիկներ կորզեցին Լիզդի շրթունքներուն եւ մատներուն : մէջտեղերէն : Ալֆրէտ , քիչ ժամանակ տառջ լեռներուն մէջ իր կատարած արշաւանքներէն մէկին մէջ ինքզինքը վտանգի ենթարկելով բռնած էր զանոնք , զորս ընտանեցնելը , մարզելը եւ իր քրոջ անսկիւղ ուրախութիւն մը պատճառելու համար անրացատրելի յոգնութիւններով անոնց փոքրիկ խաղեր սորվեցնելն իր առանձնութեան ժամերուն քաղցր զրազումները եղած էին :

Հիմակ , իր քրոջ կը նուիրէր զանոնք , եւ Ալֆրէտի տեղ արու աղաւնիին պիտի ապրէր Լիզդիի հետ , որքան որ իրականը հեռու մնար Լիզդի հեծկտալով անոր վիզը փարեցաւ , յայտնելու համար այդ ընծային իրեն պատճառած ուրախութիւնը , ծածկելով սակայն այն անսահման ցաւը որով լեցուն էր իր հոգին այդ օրերը : Ալֆրէտ առաւ վանդակը եւ կախեց զայն խուցին որթատունկերով հովանաւորուած պատուհանին վերեւ :

Նետեւեալ օրը ճամբայ ելաւ : Տանը մէջ ամէն ոք ցաւ զգաց անոր հեռացումէն , Լիզդիի այնպէս կերեւար թէ իր հոգին կամ գոնէ անկէ մաս մը բաժնուած էր իրմէ . այս անտրտունը վիշտը անզգալարար տկարացուց իր մարմինը եւ տուանց հիւանդ բլաւու՝ անկողին ինկաւ : Տժգոյն , անզօր ու անզգայ կերպով անցուց ժամանակը իրեններուն հետ , որոնք ի զուր խորհուրդ կուտային ցրուել իր տրտմութիւնը եւ ի զուր մէկ ամսէն միւսը կը յուսային որ վարժութիւնն ու գեղեցիկ եղանակը պիտի կազդուրէին անոր մարմինը :

Այսպէսով հասաւ աշունը ու այն օրը ուր Ալֆրէտ կը խորհէր տուն դառնալ արձակուրդով : Տանը մէջ ամէնքը կը հրճուէին , միայն թէ , զարմանք , ան որուն վրայ ամէնէն աւելի հաճելի տպաւորութիւն պիտի թողար այս դէպքը , Լիզդի՝ անտարբեր կը մնար : Այլեւս անկարելի էր որ անոր ճնշուած սրտին մէջ ուրախութիւնը տեղ գտնէր , մինչեւ իսկ այնպէս երեւցաւ թէ հէգ աղջկը այդ վերադարձին ու վերստին տեսութեան չէր կրնար հաւատալ :

Աշնանային փոթորիկներու հետեւանօք՝ անձրեւարեր օրերը հասան , ամպերուն սահմանքները պատուեցան , ջուրերը լեռներուն մէջ կուտակուեցան , հոսանքները սուեցան , եւ Լիզդի կը սարսափար իր եղբորը պատճառաւ որ հօրենական առնը վերագառնալու համար ճամբայ ելած էր :

Անոր վերջին նամակը յաջորդ իրիկուան համար կը հաստատէր ժամանումը . բայց անձրեւը չէր դադրէր , եւ Լիզդիի տաղնապը ժամէ ժամ կը սաստկանար ու ծնողքին բոլոր սփոփիչ խօսքերը ապարդիւն կը սահէին : Երկրորդ անգամ , վերջապէս դադրեցաւ անձրեւը : Այդ օրը պիտի գար Ալֆրէտ : Տանը մէջ ամէն ոք կ'ուրախանար , Լիզդի միայն , իր բաղձանաց կատարումը մօտենալուն աւելի քան երբեք տրտում էր : Գունատ ու անզօր , հոս հոն կը գեղեւէր խուցին մէջ , սոսկալի արհաւիրք մը կը ճնշէր իր հոգին . կէս օրուան մօտ ցաւագին ջգաճգութիւններով տկարացաւ , հարկ եղաւ անկողին տանիլ զինքը , եւ բժիշկը կանչուեցաւ որ ծանր գտաւ վիճակը : Վշտահար մայրը անոր սնա-

րին քով նստած էր եւ կը տեսնէր թէ ազ-
ջըկան դժնդակ վիճակը կը սաստիկանայ որ-
քան որ իրիկունը կը մօտենար եւ Ալֆրէտ
չէր երեւնար : Հետզհետէ ա՛լ աւելի մեծ ա՛նով
կը սարսուռային ծնողքը եւ տան մէջ եղալնե-
րը , վասնզի ջարերուն բարձրանալուն լու-
րերը աւելի վրդովիչ կերպով կը հասնէին .
մութը պատեց , Ալֆրէտ մէջտեղ չի կար :
Անտառապահը ներս մտաւ : Գետը յորդեղով
կործանած էր գաշտին կողմի թուփը ու կա-
մուրջը , ամէն բան ջրով ծածկուած էր : Ե.
րիտասարդ Պառնը այն օրը չէր կրնար գալ
այլեւս , վտանգաւոր ու երկիւղալի պիտի ըլ-
լար այդ տեսակ փորձ մը եւ սրովհետեւ տա-
կալին եկած չէր , իր ճամբուն վրայ գտնուող
մօտակայ գիւղաքաղաք մը մնացած ըլլալու էր :
— Ո՛հ , գոչեց Լիդգիլի , եւ ջրածգական ուժով
մը բարձրուն վրայ ինկաւ , ջո՛ւրին մէջն է ,
կը խեղդուի՛ , օգնութի՛ւն , օգնութի՛ւն : »

Ինչ որ գորովալից քրօջ հոգիին մէջ գու-
շակութեամբ յայտնուած էր , իրապէս պա-
տահած էր : Ալֆրէտ մտածեր էր որ , փու-
թորիկներուն եւ խանգարուած ճամբաներուն
պատճառաւ սովի օրը իր ճամբորդութիւնը
ընդհատուած էր : Այս առաւօտ որ երկինքը
կապոյտ ըլլալուն սրտովին կ'ուրախանար՝ կը
յուսար որ այն կտրուածը դիւրութեամբ պիտի
գտնէր եւ գիշերէն առաջ իր ծնողքին քով
պիտի հասնէր : Հեռուէն կը տեսնէր այն
լեռները որոնց ծոցին մէջ կը հանգչէր հօրե-
նական տունը , բայց տակաւին առաջին ըն-
լուրը չի հասած՝ կամուրջէ մը պէտք էր
անցնիլ , որ խորտակուած էր եւ մէկ ժամուան
կողմնակի չըջանի մը կարօտ էր ճամբուն վրայ
հասնելու համար : Այս յապաղումը չափաւ
զանց անհամբեր դարձուց զինքը , իր քրօջ
հոգին կը ճանչնար , գիտէր որ եթէ այսօր չի
հասնէր , որքա՛ն անձկութեամբ պիտի հա-
մակուէր անիկա , վերջապէս դարձեալ ճամ-
բուն կողմը առաջնորդեց կառքը , բայց աչ-
նան արեւը հորիզոնը կը խոնարհէր եւ լեռ-
ներուն ետեւէն կը բարձրանային մշուշի աւ-
պեր : Այդ վայրկեանին , առաջին ըլլալնե-
րուն մէջտեղը կը գտնուէր անիկա արդէն ,
լերան հեղեղը փոթորկալից եւ կատաղի
խռովութեամբ կը մտնար : Մթնշաղը

պատեց եւ իրմէ անջատուող լոյսը ճա-
ռագայթեց ճիշդ այն տեղը ուր անտառին
այս հեղեղը մեծ գետին մէջ կը գահավիժէր
եւ արձագանգ տուող ծործորներու մէջէն
առաջ կը խաղար մուկերն :

Բայց գիշերը մօտեցած էր , առնը իրեն
կը սպասէին , Լիդգիլ կը յուսահատէր , թե-
րեւս արդէն հիւանդ էր սրտադողէն — պէ՛տք
էր անցնիլ : « Ի՞նչ բանի համար լըզալ սոր-
վեցայ , » աղաղակեց Ալֆրէտ , նետեց զըլ-
խարկը ու վերարկուն եւ պտուտկող յորձան-
քին մէջ նետուեցաւ : Մէկ քանի վայրկեան
բռնու կերպով մաքառեցաւ ալիքներուն դէմ ,
բայց իր զօրութիւնը սպառեցաւ , զգաց որ
կ'ընկճի , կը սուզի եւ նայն վայրկեանին իրեն
այնպէս թուեցաւ թէ ջերմ ու փափուկ բան
մը իր կուրծքը կը ճնշէ , կը փարի իր վզին ,
չոյելով կը հակի իր կողմը , իր իմացականու-
թիւնը կորսնցուց , երբ աչքերը վերստին բա-
ցաւ , այլեւս թաց , մուկերն ալիքներու ան-
կողնին մէջ չէր գտնուէր , բոլորտիքը նայե-
ցաւ եւ ճանչցաւ երէցին սենեակը մօտակայ
գիւղի մը մէջ որ իր հօրը կը վերարբէր :
Հասկցաւ որ իր ծառան իր անխորհուրդ հա-
մարձակութիւնը գիտնալով՝ օգնութիւն խնդ-
րելու համար գիւղ փութացած էր : Այս
վտանգին լուրը ամէնքը փութայնել տուած
էր եւ քաջասրտութիւն պատճառած՝ փրկելու
համար իրենց կալուածատիրոջ սիրեցեալ որ-
դին : Գետեզերքը վազեցին , տեսան որ կը
պարտասի ու ընկղմելու վրայ է . մէջերէն
անվահերները նաւակ մը առաջ մղեցին
կատաղի յորձանքին մէջէն եւ ճիշդ այն
վայրկեանին որ հեղեղը պիտի առնէր տանէր
զգայալիկը՝ աղառեցին զայն :

Բայց արդ գիշերը այլեւս կարելի չէր
բանի մը ձեռնարկել եւ երիտասարդ Պառնը
պարտաւոր էր հաւանիլ երէցին յորդորներուն ,
որ հայրական իրաւամբը վճռեց թէ Ալֆրէտ
մինչեւ յաջորդ օրը , ոչ սենեակը եւ ոչ անկո-
ղին կրնար թողուլ : Խոտաացաւ սակայն որ
մարդ պիտի զրկէ զվեհի եւ ամէն բան պիտի
տեղեկացնէ :

Ալֆրէտ համբերութեամբ զիջաւ այս ան-
խուսափելի հարկին առջեւ : Բայց գիտէր որ
քիչ ատենէն իրենները պիտի հանգստանային

իր ժամանման մասին, ուստի հանդարտ քնացաւ :

Նորածագ արեւը արդէն չափ հեռու չի գտաւ զինքը իր հօրենական տունէն որուն ծուրը առտուան հովուն հետ, այն ժայերուն անկեան ետեւէն, կը բարձրանար արդէն եւ երբ Ալֆրէտ դարձաւ ճամբէն՝ գղեակը իր հինաւուրց աշտարակներով ու տանիքներուն կատարներովը տեսաւ իր առջեւ :

Աչքով խուզարկեց իւրաքանչիւր պատուհանը, մարդ չեր երեւնար, սուր ականարի մը նետեց դրան վրայ, ոչ ոք զինքը զիմառը ելու կուգար, թէեւ գղեակէն կարելի էր նշմարել նոյն խոկ չափ հեռուէն եկող կառքերը, Տարօրինակ թուեցաւ իրեն ասիկա, եւ երկեւղալի զգացում մը՝ դժբաղդութեան մը գուշակման նման՝ իր հոգին յուզեց : Կառքը թաւալեցաւ բակին մէջ, այնտեղ եւս ոչ ոք կ'երեւնար ողջունելու համար սպասուած անձը : Սանդուխին գլուխը տան վերակացուն, իր եւ Լիդգիլի երեւմեի դաստիարակին հանդիպեցաւ : Ծերունիին կերպարանքն ու ձեւերը անհաճոյ դէպքի մը կը նախապատրաստէին Ալֆրէտը, որ լսել պարտաւոր էր :

Անձկագին հարցումներ շփոթեցին պատկառելի բարեկամը, որ քովուտի սենեակի մը առաջնորդեց իր աշակերտը, այնտեղ՝ հարկ եղած յառաջաբանով ու բոլոր կարելի նախազգուշութիւններով յայտնեց անոր թէ, երէկ իրիկուն իր քոյրը, վաղուց ի վեր զինքը հիւծող դատն վիճակի մը եւ իրեն համար զգացած աննկարագրելի անձկութեան մը հետեւանօք՝ երկնային կեանքի փոխուած էր :

Ալֆրէտ տժգունեցաւ, սարսուռով ինկաւ ավտոյի մը վրայ, ոչ մէկ բառ իր շրթունքը չարժեց, ոչ մէկ արտօսք իր աչքերը թրջեց : Զինքը այս վիճակին մէջ գտան ծնողքը, որոնք երբ հասկեցան թէ տեղեկացած է ամէն բանի՝ ներս մտան սրտաբեկ : Մօրը արցունքները նուազեցուցին անոր հեծեժանքներուն սաստկութիւնը, իր բարդուած կսկիծը մեղմացաւ ու սաստկացաւ փոխադարձաբար, եւ Ալֆրէտ տեղեկացաւ թէ ո՞ր ժամուն եւ օր վայրկեանին մեռած էր Լիդգիլ : Ծիշող կոհակներուն դէմ իր մարտնչած միջոցին էր :

Այդ վայրկեանէն՝ լուռ մնաց ու ինքն-

աւիտի, ոչ մէկ ստիպում, ոչ մէկ խրատ կարող եղան Համալսարան վերադարձնել զինքը : Իր թախանձագին աղաչանքները, իր անմոռնջ հաստատաւորութիւնը, վերջապէս խեղճ մօրը բոլորովին առանց զաւկի չապրելու գաղտնի փափաքը՝ յաղթեցին հօրը կամքին : Ալֆրէտ ամբողջ ձմեռը տունը պիտի մնար : Իր վաղա-մեռիկ քրոջ սենեակը հաստատուեցաւ, երկու վայրի աղաւնիներն էին իր ընկերակիցները, անոնց հետ զրազիլն այն միակ միջոցն էր որ իրեն ուրախութիւն պատճառել կը թուէր : Այս պատճառաւ ուզեց ծնողացը քով մնալ ամէն օր իր հօրը գործերուն կը մասնակցէր, ձմեռ իրիկունները երբ իր հայրը երէցին ու ագարակապետին հետ թուղթ կը խաղար, ինք մօրը առջեւ գիրք կը կարդար, իր սիրելի ծնողքին համար ամէն բան կ'ընէր՝ բայց կ'ընէր այնպիսի անձի մը պէս որ մեքենարար կը գործէ եւ որուն հոգին չափ հեռու սլացած է իրմէ : Այսպէս սահեցաւ ձմեռը :

Նորածին բնութիւնը եւ այդ սիրուած վայրերուն դալարիլն ու ծագիլը, որոնց ուրախութիւնը Լիդգիլի հետ վայելած էր՝ նոր փուշեր դարձան, տակաւին իր թարմ վերքերուն մէջ միտուելու համար, եւ հայրը լուրջօրէն խորհեցաւ գործօն չըջանակի մը մէջ տանիլ իրիտասարդը, որ իր առաջնութիւնն ու ուժը վերստանալով՝ կարենար բաց վանել իրմէ այդ վտանգաւոր անզգայութիւնը :

Այս դիտաւորութեամբ՝ իր կնոջ ու զաւկին հետ գացած էր իր եղբոր տունը, որ մէկ քանի մը օր հեռու կը գտնուէր : Վերադարձին հառելի մրրիկ մը վրայ հասաւ եւ մինչ անոնք հովտին կը մօտենային՝ կարմիր երեւոյթ մը որ գրաւած էր խաւար երկնքին ճիւղ այն կէտին վրայ ուր իր դղեակը կանգնած էր՝ շարաշուք դողով մը պատեց բոլորին սրտերը : Այս երկեւղալի բնազդումը իրաւացի էր : Կայծակը զարկած էր ցորենի որաներու չու-մարանի մը, որ կրակի մէջ կը լողար, բացերը կը սպառնային բնակութեան չէնքը լափել : Ամէնքն ալ սարսուռով դուրս ցատքեցին կառքէն : Պառնոց երկուս եւ իր որդին հրդեհի վայրը փութացին, ազատութեան համար եղած քանքերուն մասնակցեցան եւ զարհու-

րամ ծառաները հրդեհուած հաստատութեան քով առաջնորդեցին, հայրը գոհունակութեամբ նկատեց որ իր որդին, ծագած վտանգին առջև գործունէութեամբ համակուած էր: Արդէն յաջողեր էին հրդեհը զըլխաւոր չէնքէն հեռացնել, երբ յանկարծ բոցը դուրս ցայտեց դղեակին այն թելին տանիքէն ուր Ալֆրէտի գեղեցիկ սենեակը կը գտնուէր, անոր պատուհանին ճիշդ վերեւն էր, եւ հրդեհը առանց նշմարուելու մէկ քանի վայրկեանէ ի վեր արդէն տներում գործած ըլլալու էր այնտեղ — «Աղաւնիներ»ս, աղաւնիներ»ս, » գոչեց Ալֆրէտ, եւ մէկ ուսուժով սանդուխին զլուրը հասաւ: Հայրը այս շարժումը տեսած չէր, այս աղաղակը

չէր լսած: Երբ շուրջը փնտոց գոյն, Ալֆրէտ աներեւութացած էր արդէն, ծառայ մը խնայուց անոր՝ պատահածը: Ահուելի կասկածներ սարսափացուցին հայրը որ մէկ քանի մարդոց հետ սրացաւ իր որդւոյն ետեւէն: Նոյն վայրկեանին՝ տան այն մասին տաղձներն ու տանիքը բարձրագոյ ճարձատուժով լվան, հորը բարձրացաւ ու լուսաւորեց զիշերուան խաւարը, եւ միւս կողմէն աղաւնիներու զոյգը ազատ ու անփնաս խոյացաւ դէպ ի երկինք: Իսկ Ալֆրէտ մեռած գտնուեցաւ, գետներ տարածուած ւ վար ինկող գերան մը սպանեաւ էր զինքը:

Թարգմանեց Գերմաներէնէ
ՕՐ. ՅԼՍՐԱ

Բերա

ՄԱՍԻՍԻ ԹՈՒՇԱՏԵՏԵՐԸ

Ս. Պատրիարք Հայրը կիրակի օրը Կայս. Պալատ գնաց Գուրպահ Պայրամի տօնը շնորհաւորելու, եւ Ա. սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի պէյի միջոցաւ իր եւ ազգին երախտագրութիւնը մատուց յոռս Կայս. Գահայից: Ն. Սրբազնութիւնը յետոյ շնորհաւորական այցելութիւն տուաւ պալատական բարձրաստիճան պաշտօնատարներու, Բարձր. Մեծ-Եւպարքոսին եւ նախարարներուն: Երկուշաբթի օրն ալ այցելեց Բարձր. Շէյխ-Իւլ-Իսլամ Էֆէնտիին, Պարսից գետապանին եւ այլն:

Կայս. գնահատում. — Գոհութեամբ կը ծանուցանենք թէ վեհ. Սուլթանը բարեհաճած է ակադեմիոս Մէճրիյէ պատուանշան շնորհել Կայս. Պալատան Բ. թարգմանիչ եւ Օտար Մաւոյ Գիւանին Տնօրէն Վսեմ. Նշան էֆ. Սէֆէրեանի, եւ Բ. կարգի Օսմանիյէ պատուանշան՝ արտաքին գործոց նախարարութեան հաշուակալութեան գիւանի Ա. քարտուղար Սաչիկ էֆ. Փափազեանի: Նոյնպէս, փաշայութեան արտօս՝ Կայս. Պալատան բժիշկ եւ Բժշկական վարժարանի ներքին արտատարութեան ուսուցիչ Տօքթ. Վահան պէյ Մամուլէկեանի որ գնդապետութենէ լիվայութեան աստիճանին բարձրացաւ: Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան՝ գորգի վաճառական Զայրմայր էֆ. Ճշմարտախօսեանի:

Պերպլեբեան վարժարանի հաստատման 25. ամեայ տարեկարծը կատարելու համար՝ այդ հաստատութեան նախկին սաներուն կողմ Ս. Պատրիարք Հօր եւ Ազգ. Վարչութեան մատուցուած գրութեան պատճէնը հրատարակեց Արևուիք, — գոտթիւն մը որ գեղեցիկօրէն ի վեր կը հանէ Պէրպլեբեան վարժարան

նին ու անոր բազմաշխատ հիմնադրին արգիւնքները: Այսօր վաղը կեղէ Պատրիարքական Կոնդակ մը՝ այս կրթական ու գրական յորելեանին առթիւ, որ տարակոյս չունինք թէ համակիր ընդունելութիւն մը պիտի գտնէ ամէն կողմ:

Իզմիրեանց մրցանակ. — Կր լսենք թէ Արմաշի միարաններէն Տ. Թորգոմ վարդապետ Իզմիրեանց Գրական Մրցանակի Յանձնաժողովին ներկայացուցեր է իր ձեռագիր մէկ ուսումնասիրութիւնը՝ Ներսէս Լամբրոնացիի վրայ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ sofiական օրերու Հայսուրբ եկեղեցւոյ, գրեց ԳԻՍԱԿ. — Տպագր. Յ. Մատթէոսեան: Գին 5 զրշ. — Այս սիրուն հատորը կը պարունակէ շարքը այն գեղեցիկ յօդուածներուն որոնք յաջորդաբար հրատարակուեցան Բիւզանդիոնի մէջ, որոնց վրայ տեսցած է անտիպ մաս մըն ալ:

ԱՌԱՋՆՈՐԴ վաճառականաց օգտաշատ աշխատասիրութեան, զոր կը հրատարակէ Սիմոն էֆ. Չէօմէքճեան, Ա. հատորի 2. տետրը ստացանք: Կը պարունակէ իր ծրագրին համապատասխանող շահեկան նյութերէն զատ՝ «Ասիոտական Բաւարան»ին շարունակութիւնը:

Արտօնատէր Կ. Ս. Իիթիլիճեմն

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինճանճըր Եօզուշու, Թիւ 27

Թ Ղ Թ Ա Վ Ա Ճ Ա Ռ

Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Պոլիս, Սուլթան-Համամ, բաղնիքին կից թիւ 18

Տէր-Ներսէսեան Թղթավաճառատունը՝ իր նախկին տեղը վերահաստատուած՝ զրա-
մատանց, վաճառատանց, գրասենեակի եւ գպրոցներու վերաբերեալ ճոխ ու ընտիր ապ-
րանքները բերել տուած է։ Գլխաւորաբար հոգ կը տանի Տպագրութեան (փոխանակագիր ու
շրջաբերական, քարթ ար վիզիթ, հարսանեաց հրաւիրագիր եւլն եւլն) եւ կազմի վերա-
բերեալ գործերու, եւ կը ստանձնէ այս կարգի ամէն յանձնարարութիւններ զորս կը կա-
տարէ փութով, խնամով եւ խիստ զիւրամատչելի պայմաններով։

Ամէն անոնք որ հաճին անգամ մը պատուել Տէր-Ներսէսեան վաճառատունը՝ մեծա-
պէս գոհ պիտի մնան ապրանքներու ճոխութենէն ու ընտիր հանգամանքներէն, մանաւանդ
յանձնարարութեանց փութով կատարումէն եւ այն ուղղամտութենէն որ վաճառատան կէտ
նպատակն է։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնները փութով կը կատարուին։

5—10

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՔ ԷՏՈՒՐՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմնի խան, Կ. Պոլիս։

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Ա Լ 1852

ՏԲԹ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ — ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ, 396

(Եաննի գարեջրասան վրայի յարկը, ճիշդ Զրպուհեանց դէմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենատափիկ ցաւած ախտները մեկ ան-
գամ կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ։

Նորահար եղանակաւ, նորը, ճաշակաւոր եւ զիւսկուն արհեստական ախտներ կը
պատրաստեն, յար եւ նման բնականի, դիմիքի ձեւաւորութիւն ըստ տարիքի, ծանոթութիւն
եւ ազատ արտասանութիւն երաշխաւորուած։

Բերնի հիւանդութիւնք կատարելագէտ կը բուժուին ինչպէս նաեւ թորեցուցիչ դեղե-
րու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն։

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (վիկէնդէ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (վիկէնդէ
կես գիշեր) հիւանդ կ'ընդունին։

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ.



ՌՕՍՒԱ — ROSSIA



Ա.ՊՍ.ՀՈՎԱ.ԳՐԱ.ԿԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ	34.775.642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121.765 333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164.172.000 »
Կեդրոնացեղի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մախաւան հին տեղը	
Ընդհ. Քննիչ	Ընդհ. Գործակալ
Ա. ՀԻՐՄԻԻԶ	ԹԷՍՏՈՐ ԱԷԲԷՆ

ԸՆՏԻՐ, ՀՈՏԱԻԷՏ, ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԷՅ



ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

Ամէն տեսակ թէյերու նոր բերքերէն մեծ քանակութեամբ հասած է ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԴՈՒԼԵԱՆ վաճառատունը : Թէյի սիրահարներն ու ամէնէն փափկաճաշակներն իսկ վերջին ծայր գոհ պիտի մնան այս թարմ թէյերէն , որոնք ընտիր , առողջապահիկ եւ հոտաւէտ բլլալով հանդերձ՝ անմրցելի ըսուելու աստիճան աժան են :

Գաւառներու յաճախորդք թէյ գնելու համար պէտք չունին անձամբ գալու , նամա-

կով թող դիմեն ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԴՈՒԼԵԱՆ վաճառատան , ուր ամենամեծ խնամով , զգուշաւորութեամբ կը գործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ : Դիւրութեան համար՝ թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապրանքները բեռցուին ու խնամքով ներկայացուի գնողին : Կեղծ թէյ չգնելու համար հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԴՈՒԼԵԱՆ անունաւք : Կեդրոնատեղին՝ Կ. Պոլիս , Պահէ Գարու , Ճէլալ Պէյ խանի կից , թիւ 10 , Կ. Եավրուեան Յ. Իսաղուեան մեծ վաճառատունը :

ՀԱՊԻԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ

ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

Մ. ՏԵՐ - ԴԱԻԻԹԵԱՆ

ՀԱՊԻԿ

Թիւ 21, Ղալաթիա, Վոյլոսա փողոց, Գաղղիական նամակասան դեմ

Նիստ աժան զինելով կը ծախէ ֆրանէլ , քթան եւ բիքէ չապիկներ , փողկապ , օձիք , թեւնոց , կոճակ (ոսկեզօծեալ ու պարզ) , գուլպայ , թաշկինակ , զմեղի , խողանակ , սանաթ ու անուշահոտութեանց ամենաբնախոր տեսակներ :

Միշտ խնամով ու դիւրամտալի զինելով կը պատրաստէ նաեւ չափու վրայ ամէն տեսակ չապիկ , գիշերազգեստ , օձիք , թեւնոց , ու կը կատարէ ներքին ճերմակեղինաց յանձնարարութիւններ :

Հանրածանօթ Մ. ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ չապիկի գործարանը նորաձեւութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան ու զինելու տարապայման աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի տուն մըն է :